ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2013թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ. 580-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի ընդհանուր բաժնային սեփականությունը համարվող Սիսակյան փողոցի հ.10 շենքի հ.51՝ 54.95քմ մակերեսով բնակարանի իր բաժնեմասը (1/2) (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 25.09.2013թ. հ.25092013-01-0056 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սարգիս Բաբախանյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սարգիս Բաբախանյանը դիմել է Երևանի քաղաքապետարան Աջափնյակ վարչական շրջանի Սիսակյան փողոցի հ.10 շենքի հ.51՝ 54.95քմ մակերեսով բնակարանի բաժնեմասն իր անվամբ մասնավորեցնելու խնդրանքով:

Սիսակյան փողոցի հ.10 շենքի հ.51 բնակարանը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է Սարգիս Բաբախանյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 25.09.2013թ. հ.25092013-01-0056 վկայական):

Նշված բնակարանում 1967 թվականից բնակվել է Սարգիս Բաբախանյանը իր կնոջ՝ Մարգո Այվազյանի հետ համատեղ: Մարգո Այվազյանը 2000 թվականի հունվարի 11-ին մահացել է (17.01.2000թ. տրված հ.121507 մահվան վկայական): Սարգիս Բաբախանյանի ժառանգության իրավունքը նշված բնակարանի բաժնեմասի նկատմամբ հնարավոր չի եղել ձևակերպել, քանի որ վերջինիս և Մարգո Այվազյանի ամուսնությունը օրենքով սահմանված կարգով գրանցված չի եղել:

Նկատի ունենալով, որ Մարգո Այվազյանը ժառանգներ չի ունեցել, նշված բնակարանի բաժնեմասը ճանաչվել է անժառանգ գույք և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածով սահմանված դրույթների համաձայն բաժնեմասի նկատմամբ ձևակերպվել է Երևան համայնքի ժառանգության իրավունքը, որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում:

Համաձայն Շենգավիթ վարչական շրջանի «Ծաղկունք» համատիրության կառավարչի կողմից տրված տեղեկանքների՝ Սարգիս Բաբախանյանը 1967 թվականի մարտի 22-ից փաստացի բնակվում է Սիսակյան փողոցի հ.10 շենքի հ.51 բնակարանում՝ կատարելով բնակարանի կոմունալ վճարումները:

Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի ընդհանուր բաժնային սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի ընդհանուր բաժնային սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ